

ՏԵՂԵԿԱԼԵ-ՍԵՂՄԱԳԻՐ

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին հաշվետվության

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1030-Լ որոշմամբ ներառված, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) կողմից 2018 թվականին կատարման ենթակա գերակա խնդիրներն ու միջոցառումները ամբողջությամբ ու սահմանված ժամկետներում իրականացվել են:

2018 թվականին Կոմիտեի ստորաբաժանումների կողմից իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրման համար մուտքագրված փաստացի եկամուտը կազմել է 4'281'646'077 դրամ (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 14.4 %), տարեկան բյուջեն նախատեսված է եղել 3'885'720'800 դրամ, փաստացի ծախսը կազմել է 3'743'671'567 դրամ: Եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը (որը օրենքի պահանջների համաձայն փոխանցվում է պետական բյուջե) կազմել է 537'947'510'2 դրամ, որն ավելի շատ է, քան նախորդ 6 տարիները միասին վերցրած: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքի գծով նախատեսվել է 840'000'000 դրամ, փաստացի գանձվել է 981'085'281 դրամ, որը նախատեսվածից ավել է 141'085'281 դրամով կամ 16.8 %-ով (2017 թվականի համեմատ աճել է 16.4 %-ով):

Անթուղթ, առցանց և ինքնաշխատ կադաստր. տնտեսական զարգացում բարձր տեխնոլոգիաների միջոցով, որին ամբողջովին կհասնենք 2022 թվականին. այն Էապես կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը, կինսայի մարդկանց ժամանակն ու ծախսերը: Դեպի այդպիսի «նոր կադաստր» թռիչքի համար 2018 թվականին կադաստրի համակարգում իրականացվեց տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ: Ճշտվեցին ու ակտորոշվեցին թույլ տեղերը, մշակվեցին առաջիկա անելիքները՝ համակարգում տեղեկությունների պահպանության անվտանգությունը մեծացնելու համար (չնայած այժմ էլ կադաստրն այս ոլորտում ունի ամենաժամանակակից հագեցվածությունը Հայաստանի պետական կառույցների մեջ):

Ինտեգրված կադաստրի հայեցակարգի նախագիծը պատրաստ է. ՀՀ կառավարությունում հաստատվելուց հետո կսկսվի համապատասխան համակարգչային ծրագրի մշակումը, ինչը տեղեկատվական մեկ բանկում կհավաքի աշխարհագրական, քաղաքաշինական, մշակութային, բնապահպանական, գյուղատնտեսական քարտեզներն ու այլ տարածական տվյալներ: Այդ տեղեկություններն անընդհատ առցանց կթարմացնեն իրավասու կողմերը, իսկ դրանց գործածությունը կնպաստի Հայաստանում ներդրումների աճին, գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ նպատակի օգտագործելուն, զբոսաշրջության զարգացմանը և, առհասարակ, ցանկացած որոշման արագ կայացմանը:

Կառուցվածքային բարեփոխումների շրջանակում, ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշմամբ նախատեսված միջոցառումների ծրագրին համապատասխան, 2018 թվականին կադաստրի համակարգի 3 տարածքային ստորաբաժանումներ միաձուլման ձևով վերակազմակերպվել են մեկ ստորաբաժանման, որի գործառույթներն արդեն 2019 թվականին կտարանջատվեն 3 հիմնական մասնագիտացված ուղղությունների ու կտեղակայվեն տարբեր հասցեներում և նույնիսկ տարբեր քաղաքներում, ինչը ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացման հետ կնպաստի նաև

Կոռուպցիոն հնարավոր ռիսկերի բացառմանը: Տվյալ գործառույթը ծրագրով նախատեսվել է ավարտել մինչև 2022 թվականը:

Հաստատված 5-ամյա միջոցառումների ծրագրի պահանջներից ելնելով՝ Կոմիտեն արդեն ձեռնամուխ է եղել մի շարք օրենսդրական փոփոխությունների մշակմանը, որոնց վերաբերյալ շահագրգիռ մարմինների ու հանրության դիրքորոշումները ձևավորվելուց հետո սահմանված կարգով դրանք կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը: Այսպես՝

- մշակվել է «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- մշակման փուլում են ինտեգրված (միասնական) կադաստրի ստեղծմանն ուղղված հայեցակարգի ստեղծումը, համակարգի կողմից դիմողներին տրվող ավարտական փաստաթղթերում կնիքի վերացման, ինչպես նաև մի շարք հրատապ հարցերի կարգավորման նպատակով նախատեսված փոփոխությունները «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում, ՀՀ հողային օրենսգրքում և այլն:

Կոռուպցիոն բացահայտումները կադաստրի համակարգում անհետևանք չեն մնում, ներսում լուծումներ են տրվում՝ նման ռիսկերը չեզոքացնելու համար, իսկ բացահայտված փաստերն ու դրանց առնչվող նյութերը սահմանված կարգով տրամադրվում են իրավապահ մարմիններին:

Ի վերջո, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն իր նոր գաղափարներով, նախաձեռնություններով, աշխատելաոճով, կարգախոսով ու նոր իմիջով է ներկայանում հանրությանը. պաշտոնական կայքէջում և սոցցանցերի նորաբաց իր հարթակներում հանդես է գալիս նոր դեմքով՝ արդար, ազնիվ, հոգատար, մտերմիկ, արժանապատիվ, պրոֆեսիոնալ և ժամանակակից: